Կողքին գտնում է մի ուրիշ քարի կտոր, հայերէն արձանագրութեամբ, շեղագիր կոչուած գրերով, որ իւր ծագմամբ նոյնչափ հին պիտի լինի, որչափ Մեսրոպեան կոչուած երկաթագիրը, ուրեմն շեղագիր լինելու հանգամանքը արդէք չէ հին ընդունելու այն: Տարաբաղդաբար, արձանագրութեան շատ եղծուած լինելու եւ ժամանակի անյարմարութեան պատճառով, չկարողացանք տեղում վերծանել, ինչպէս եւ լուսանկարից յետագայում: Բայց ասանց հայերէնի էլ վրացերէնի գոյութիւնը չի հարկադրում բացատել չէնքի հայկական ծագումը. Գիրք թղթոցի մէջ պահուած ժամանակակից գրաւոր վկայութիւնները հաստատում են Գուգարաց գաւառի մէջ Զ. դարում հայերէնն ու վրացերէնը հաւասարապէս որպէս եկեղեցական լեզու գործադրութիւնը, որ անկարելի կը լինէր այլ եւս է. դարի առաջին տասնամեակից յետոյ, երբ բաժանուեցան երկու ազգերը եկեղեցականապէս եւ թշնամութիւնը գօրացաւ նրանց մէջ: Վրացերէնը երեւան է գալիս մէկ էլ Զաքարեանների շրջանում, երբ քաղաքական սերտ գործակցութիւն էր ստեղծուած երկու ազգերի մէջ: Նախընթաց բոլոր համեմատութիւններն ու ցուցումները ի նկատի առնելով, Կողբի եկեղեցու ծագումը պէտք է նշանակել ոչ ուշ, քան Զ. դարի վերջերը, եթէ ոչ աւելի վաղ:

Մեր ցուցադրած բեկորների բազմազան երեւոյթներն ու մոտիւները՝ շուշանաձաղիկներն ու բամաշկաները, քառաթեւ եւ վեցթեւեան խաչերը բոլորակների մէջ առնուած, սիւների խարիսխները ու նրանց բոլորակութիւնը, բոլորը հաստատում են մեր բերած փաստերը, թէ այս եկեղեցին մի չէնք է նախ քան է. դարը Հայաստանում գոյութիւն ունեցող գեղարուեստական հոսանքի, որ մեռնել է սկսում կամ մեռել է արդէն է. դարում ազգային ճարտարապետութեան կատարելապէս ծաղկման շրջանում: Յետագայ (Պատկ. 65) խաչերը մասամբ եկեղեցու ծագման եւ ոմանք աւելի ուշ ժամանակին են պատկանում, բացի ամենից ձախ բեկորը, որ նախնական շրջանի մնացորդ է:

* * *

Պատկ. 61

Պատկ. 62